



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

Հ. ԴԱՎԹՅԱՆ

(Ավագ թիբիոգրաֆ)

ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԳՐԲԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ



այերը պատկանում են այն ժողովուրդների թվին, որոնք առաջինը ձեռնամուխ հղան տպագրության գործին։ Ընդամենը մի քանի տասնամյակ էր անցել տպագրության գյուտը Եվրոպայում տարածում գտնելու օրից, երբ 1512 թվին վենետիկում լույս տեսավ առաջին հայերեն տպագիր գիրքը՝ «Պարզայտումար»-ը։ Զարմանում, միաժամանակ երախտագիտության զգացումով ենք համակվում այն մտքի մշակների նկատմամբ, որ միայն լսած լինելով նոր գյուտի մասին, իրենց իսկ պատրաստած թղթի վրա, 1641 թվին հեռավոր Նոր-Ջուղայում հրատարակեցին մեծածավալ «Հարանց վարք»-ը։ Տպագրության արվեստով հիացք էր պատճառում 1666—68 թվականներին Ամստերդամում առաջին անգամ տպագրված մեծագիր «Աստուածաշունչ»-ը։ Այդ հարյուրամյակի վերջին տարիներում լույս ընծայվեց Մովսես Քերթոզհոր «Պատմութիւն հայոց» աշխատությունը, որը հայ ժողովրդի ընթերցանության ամենատարածված գրքերից մեկը դարձավ, իսկ օտարագրի գիտնականների համար՝ արժեքավոր մի նորություն։ Նույն թվերին լույս տեսած հայերեն առաջին քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյց»-ը, հետագայում աշխարհի գիտնականների ու աշխարհագրագետների կողմից ճանաչվեց իբրև իր ժամանակի հրատարակված լավագույն քարտեզներից մեկը։ Հայկական տպագրությունը լի է մեկը մյուսից նշանակալից նման պատմություններով։ Իսկ որքա՞ն հարուստ և ուսանելի է այն հրատարակիչների գործունեությունը, որոնք օտարության մեջ, հալածանքների ու գրկանք-

ների գնով միշտ վառ պահեցին հայ դպրության ջահը։

Տպագրության զարգացման, մեր ժողովրդի հոգևոր կյանքի, նրա մշակութի մասին, սակայն, դժվար է պատկերացում կազմել առանց ունենալու հայ տպագիր գրքի ամբողջական ցուցակը՝ մատենագիտությունը։ Հայ գրականության մեջ արդեն կա երկու նմանօրինակ աշխատություն, որոնք թեև չեն կարող բավարարել այսօրվա պահանջներին, բայց մեծապես կօգնեն նոր մատենագիտություն ստեղծելու գործին։ Դրանցից մեկը Հ. Գարեգին Զարհանալյանի «Հայկական մատենագիտություն», աշխատությունն է, հրատարակված 1883 թվին։

Զխոսելով այն սխալների ու բացթողումների մասին, որոնք անխուսափելի էին այդ աշխատության համար՝ իբրև առաջին մատենագիտության, պետք է նշել, որ նյութերի դասավորման, գրքերի նկարագրման մեջ ևս բազմաթիվ սխալներ կան։ Զարհանալյանը նյութերը դասավորել է հեղինակների, վերնագրերի, երբեմն էլ թեմաների ալբանական կարգով։ Միասնական սկզբունք չլինելու պատճառով շատ հաճախ ընթերցողը չի կարողանում գտնել ցանկացած գիրքը կամ հեղինակին։ Օրինակ, «Պ» տառի շարքում ընթերցողը չի հանդիպում «Պոռշյան» ազգանվանը, մինչդեռ «Հ» և «Շ» տառերի շարքում հանդիպում ենք «Հալի խնդիր» և «Շահեն» վեպերի նկարագրությանը, իսկ «Սոս և Վարդիթեր»-ի մասին հիշատակություն անգամ չկա։ Զարհանալյանը չունի ոչ մի հղիչ՝ գրքի վերնագրից դեպի հեղինակ կամ ընդհանրապես

նրա նկարագրություններում տեղեկություն չի տրվում գրքի ծավալի, էջերի քանակի մասին, որ շատ կարևոր է գրքի վերաբերյալ նախնական գաղափար կազմելու համար:

Բազմապատակ թարգմանիչ ու բանասեր Հ. Արսեն Ղազիկյանը իր նախորդի թերութունները ուղղելու ճանապարհով փորձեց ստեղծել մի լիակատար ու լիարժեք մատենագիտություն: Նա իր գիրքը անվանեց «Հայկական նոր մատենագիտություն» և հանրագիտարան հայ կյանքի: Եվ իսկապես, եթե ավարտվեր, այն մի իսկական հանրագիտարան էր դառնալու: Ղազիկյանը ևս նյութերը դասավորում է այբբենական կարգով, բայց նա նախապատվությունը տալիս է հեղինակի անվան վրա նկարագրելուն, մի բան, որ շատ է հեշտացնում մատենագիտությունից օգտվելը: Հղիչները օգտնում են ընթերցողին կողմնորոշվելու, գտնելու փնտրածը: Ղազիկյանը արժեքավոր շատ տեղեկություններ է տալիս ծածկանունների, առանց հեղինակի գրքերի մասին: Նկարագրությունները ավելի լիակատար են: Տխտղոսաթերթում եղած տվյալներից բացի նա բերում է նաև գրքի բովանդակությունը, ծավալը, էջերի քանակը, ինչպես նաև քննադատականներ և այլ տեղեկություններ կարևոր գրքերի մասին: Ղազիկյանի մատենագիտությունը պրակտիկորեն հրատարակվեց 1909—12 թվերին: Այն հասցված է մինչև «և» տառը և ընդգրկում է մինչև 1905 թվականը լույս տեսած գրքերը:

Մեր օրերում հրատարակվել են մատենագիտական մի շարք աշխատություններ, որոնք ընդգրկում են առանձին շրջաններ, գիտություն ճյուղեր կամ վերաբերում են առանձին գործիչների: Այսպես, Հայաստանի Գրապատմության հրատարակել է «Եռասուոր ճշայ գրականության բիբլիոգրաֆիա»-ն, «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»-ն և այլն, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան՝ Հ. Աճառյանի, Վ. Համբարձումյանի, Հ. Օրբելու բիբլիոգրաֆիաները, (մատենագիտությունները), Հայկական ՍՍՌ Պետական Հանրային գրադարանը՝ Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Եկմալյանի, Աբովյանի, Նալբանդյանի, Զարենցի, Շահումյանի և այլոց բիբլիոգրաֆիաները: Վերահրատարակվել է Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» շատ արժեքավոր մատենագիտությունը: Այս բոլորը, սակայն, հեռու են հայ ապագիր գրքի մասին ամբողջական պատկերացում տալուց և վաղուց ի վեր զգացվում է այդպիսի մի աղբյուրի անհրաժեշտությունը: Այս կարևորագույն գործը իրականացնելուն ձեռնամուխ եղավ Հայկական ՍՍՌ Կոլտուրայի

մինիստրությունը և Հայաստանի Պետական Հանրային գրադարանում կազմակերպվեց Հայ գրքի մատենագիտության բաժին: Բաժնի նպատակն է կազմել սկզբից մինչև մեր օրերը լույս տեսած հայերեն, ինչպես և հայատառ թուրքերեն ու լատիններեն տպագիր գրքերի լրիվ ցուցակը: Մրադրի համաձայն աշխատանքները ընթանալու են հետևյալ կերպ. նախ կազմվելու է Հանրային գրադարանի հայկական ֆոնդերի այբբենական ցուցակը՝ կառավարչային քարտերի վրա, ապա այդ ցուցակը համեմատվելու է Սրբվանի և Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների խոշոր գրադարանների հայկական ֆոնդերի հետ ու լրացվելու է այն գրքերով, որոնք չեն եղել Սրբանի գրադարաններում: Դրանից հետո այդ քարտարանը պետք է համալրվի արտասահմանի հայ գաղութների խոշորագույն գրադարանների ու գրատների այն գրքերի նկարագրություններով, որոնք չկան ՍՍՌ-ի գրադարաններում: Այն գրքերը, որոնք չեն հայտնաբերվի ոչ մի գրադարանում բայց հիշատակված կլինեն գրավոր աղբյուրներում, նույնպես կմտնեն մատենագիտության մեջ: Հնարավոր է, որ երբեք լույս տեսած հայերեն որևէ գիրք գտնվի որևէ անհատի անձնական գրադարանում. այդ ևս հայտնաբերվելու և մտցվելու է ցուցակներում: Քարտերի վրա նշվելու է, թե այս կամ այն գիրքը որտեղ է գտնվում:

Աշխատանքի հաջորդ շրջանում այդ այբբենական-քարտարանը կդասավորվի սիստեմատիկ կարգով, ըստ գիտության ճյուղերի և կատարաստվի հրատարակության: Մատենագիտությանը կկցվեն նաև հեղինակների, վերնագրերի, թարգմանիչների, տպագրական օջախների և այլ այբբենական ցանկեր: Նյութերի սխառնմատիկ դասավորման շնորհիվ ընթերցողը կարող է իմանալ, թե գիտության այս կամ այն ճյուղի վերաբերյալ մինչև այժմ ի՞նչ հայերեն գրքեր են լույս տեսել, իսկ այբբենական-առարկայական ցանկերի միջոցով կիմանա, թե ցանկացած հեղինակից ինչ գրքեր կան, քանի հրատարակություն են ռեզյուսներ և այլն:

Ընդհանուր մատենագիտությանը զուգահեռ հրատարակվելու է նաև հնատիպ, մինչև 1800 կամ 1850 թվականը, լույս տեսած գրքերի մեկ-երկու հատորը: Հնատիպ այդ գրքերը, որ ընդհանուր մատենագիտության մեջ ցրված կլինեն ըստ գիտության ճյուղերի և կունենան առավել պարզ նկարագրություն, այստեղ կդասավորվեն ժամանակագրական կարգով և կնկարագրվեն ավելի մանրամասնորեն: Բացի ամբողջական նկարագրական տվյալներից, կրճարվի ամբողջ

տիտղոսաթերթը, բովանդակությունը, հիշատակարանը, ինչպես նաև այն արժեքավոր ձեռագիր նշումները, որ սերունդները թողել են այս կամ այն հնատիպ գրքի վրա: Կրեթիկն նաև քննադատականներ գրքերի մասին, հրատարակության պատմությունը և այլն: Այս տվյալները անկասկած կարող են շատ արժեքավոր աղբյուրներ հանդիսանալ հայկական տպագրության զարգացումը ուսումնասիրելիս, տարբեր գիտությունների պատմությունը գրելիս և, հայ ժողովրդի լիակատար պատմությունը ստեղծելիս, ինչպես կարծում էր մեծ հրապարակախոս-լուսավորիչ Մ. Նալբանդյանը անցյալ դարի 60-ական թվականներին («Ընտիր երկեր», 1953 թ., էջ 300):

Թե որքան ծանր ու դժվարին է հայ տպագիր գրքի լիակատար մատենագիտություն ստեղծելը, պատմում է դեռևս Հ. Ն. Ղազիկյանը իր վերոհիշյալ գրքի առաջաբանում: Այժմ ավելի քան դժվարացել է այդ գործը: Ղազիկյանի մատենագիտությունը լույս

տեսնելուց հետո աշխարհի զանազան ծայրերում տասնյակ հազարավոր հայերեն նոր գրքեր են տպագրվել: Այստեղից էլ պարզ է, թե ինչպիսի հայրենասիրական գործ արած կլինեն, և որքան շատ բանով մեզ կարող են օգնել արտասահմանի հայ գաղութների գրադարանների, գրատների աշխատողները, վենետիկի ու վիեննայի Միաբանությունները, Երուսաղեմի և Անթիպիսի վանքերը, հայ մշակույթի հետ առնչություն ունեցող մեր բոլոր հայրենակիցները և հայրենակցական մշակութային կազմակերպությունները:

Հայ տպագիր գրքի մատենագիտության հրատարակման գործը կարևոր նշանակություն ունեցող մի նախաձեռնություն է, որի իրականացումն հնարավոր է մեր ժամանակներում, երբ հայ ժողովրդի մեծամասնությունը և նրա դարավոր մշակույթի գերակշռող մասը կենտրոնացած են իրենց Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում:

